

տարիէն հողէն դուրս ելաւ, ինչպէս կը գրէ Յովսեպոս, տեղի չկայ պանծացնելու շինուածական և ճարտարագետական մեր արգի եղանակները՝ հին ժամանակներու բազդատութեամբ: Թատրոն մը, ամփիթատրոն մը, Կոկորգիլոսներու գետէն առնուած կամ Կարմեղոսի դառիվայրէն ջուր բերելու համար հիւսիսէն եկած ագուզաները, Օգոստոսի նուիրուած պերճաշուք մեհեան մը, ուր կառուցուած էին երկու հսկայ արձաններ՝ մին ի պատիւ կայսեր՝ և միւսն Հռովմի, ոչ մի կերպով ստորին, ինչպէս կ'ըսէ Յովսեպոս, ողիմպոսեան Արամազդէն կամ Արգոսեան Հերայէն, անոնք Կեսարիան ըրած էին Պաղեստինի ամենէն գեղեցիկ քաղաքը: Այս պայմաններուն մէջ, Հերովդէս յարմար տեսաւ որ ան կրէ անունը Հռովմի տիրոջ որ իր բարերարն էր: Մեծ հանդիսաւորութեամբ ընծայեց զայն. և նաւահանգիստն ալ ընդունեց Սեբաստոս (Օգոստոս) անունը: Կեսարիա քաղաքային և զինուորական կրկին տեսակէտներով այն ատենէն ըսկըսեալ Հրէաստանի մայրաքաղաքը եղաւ:

Բոլոր աշխարհ գիտէ թէ ան կարևոր դեր մը կատարեց քրիստոնէական նախնական պատմութեան մէջ: Փիլիպպոս սարկաւազ աւետարանիչը հոն կը բնակէր և կը քարոզէր (Գործք Առաջ. Ը. 40): Պետրոս հոն եկաւ մկրտելու Կուռնելիոս հարիւրապետը և իր ընտանիքը, հեթանոսութեան նախախորյրիքը (անդ, Ժ. 1, ԺԱ. 11): Հերովդէս Ագրիպպա հոն պատժուեցաւ Աստուծոյ (անդ, ԺԲ. 19-24): Կեսարիոյ մէջ էր որ Պողոս՝ իր կեանքը ազատելու համար Երուսաղէմը թողլու ստիպուած ըլլալով՝ Տարսոն գացած է (անդ, Թ. 30): Պողոս Յունաստանէ վերադարձին Կեսարիա եկաւ (անդ, ԺԸ. 22): Յետոյ ան հոն եկաւ դարձեալ իր առաքելական երրորդ ուղևորութենէն վերջ (անդ, ԻԱ. 8) և հիւրընկալուեցաւ Փիլիպպոս սարկաւազին մօտ որ հոն կը բնակէր իր չորս մարգարէուհի աղջիկներով: Անկէ Երուսաղէմ գնաց Ագարոսի գուշակութեանց և հաւատացելոց աղաչանքին հակառակ (անդ, ԻԱ. 8-16): Հոն տարուեցաւ իբր բանտարկեալ, այն քաղաքին մէջ երկու տարի մնալէ վերջ Հռովմ երթալու և հոն կայսեր առջև դատուելու համար (անդ, ԻԳ. 23-33. ԻԵ. 1, 4, 6, 13. ԻԵ. 11-12): Առաքելական թուականի այս մեծ յիշատակները մեծապէս նպաստեցին որ Կեսարիոյ եկեղեցին ըլլայ Պաղեստինի ամենէն նշանաւոր եկեղեցիներէն մին: Ժողո-